Բուժքրոջ յուրաքանչյուր գործողություն պետք է նպատակաուղղված լինի հիվանդի ապաքինմանը և նրա համար առավելագույն հարմարավետության ապահովմանը:
Բուժքույրը պետք է պահպանի իր մասնագիտության վարկն ու հեղինակությունը՝ արտաքին տեսքով, վարվեցողությամբ, մասնագիտական պատրաստվածությամբ նվաճի հիվանդի վստահությունը:

Միջանձնային փոխհարաբերություններ

Բուժքույր-հիվանդ

- հիվանդի հետ խոսելիս նրան դիմել «Դուք»-ով,
- անթույլատրելի են ինչպես չափից դուրս ընկերական, այնպես էլ չափազանցված պաշտոնական հարաբերությունները,
- հիվանդի հետ շփվելիս ուշադրություն դարձնել ժեստերին և պահվածքին,
- հիվանդի ներկայությամբ չքննարկել նրա ախտորոշումը և նշանակված բուժման ճշտությունը,
- հիվանդի հետ խոսել պարզ, չգործադրել բարդ բժշկական տերմիններ, թույլ տալ նրան արտահայտվել,
- խստորեն պահպանել հիվանդի բժշկական և անձնական տվյալների գաղտնիությունը,
- հիվանդի անձնական կյանքին միջամտությունը սահմանափակել միայն մասնագիտական անհրաժեշտության չափով,
- բժշկական միջամտություններից առաջ հասկանալի ձևով բացատրել հիվանդին դրանց իմաստը, օգնել նրան հաղթահարելու հոգեհուզական լարվածությունը,

Բուժքույր-հիվանդի հարազատներ

- հիվանդի հարազատների հետ փոխհարաբերություններում լինել զուսպ և բարեհամբույր,
- պատասխանել հարազատների միայն այն հարցերին, որոնք գտնվում են բուժքրոջ իրավասության շրջանակներում,
- տեսակցող հարազատներին հարգանքով բացատրել տեսակցության կանոնները,

Բուժքույր-բուժքույր

- հարգանքով վերաբերվել գործընկերներին,
- դիտողությունները կատարել նրբանկատորեն՝ ոչ հիվանդի և նրա հարազատների ներկայությամբ,
- բարդ իրավիճակներում հիվանդի համար աննկատ և առանց խուճապի օգնել գործընկերոջը,

Հիվանդին հետազոտելիս հիշիր, որ այդ ընթացքում նա էլ քեզ է հետևում:
Մ.Մուդրով